ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ ԱՊՐԻԼԻ 6-ԻՆ և 7-ԻՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ ԵՆ ԻՐԱԿԱՆՑՎԵԼ

07.04.2016 17:19

Ապրիլի 6-ին և 7-ին Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատում կազմակերպվել էին «Տնտեսական մրցակցության իրավական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում»,«Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների առանձնահատկությունները» թեմաներով վերապատրաստման դասընթացներ:

«Տնտեսական մրցակցության իրավական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով դասընթացը վարել է ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրեն, փաստաբան, ի.գ.թ. Սիմոն Բաբայանը:

Դասընթացի նպատակն էր զարգացնել փաստաբանների հմտությունները տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում: Քննարկվել են հակամրցակցային համաձայնությունների, մենաշնորհի և գերիշխող դիրքի համակենտրոնացման իրավական բովանդակությանն առնչվող խնդիրներ: Սեմինարի մասնակիցների ուշադրությունը հրավիրվել է իրավաբանական անձանց անբարեխիղճ մրցակցության հիմնահարցերին: Քննարկվել է նաև այս բնագավառում կիրառվող պատասխանատվության միջոցների վերաբերյալ փաստաբանի տեղեկացված լինելու կարևորությունը:

«Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների առանձնահատկությունները» թեմայով դասընթացը վարել է ԵՊՀ դասախոս, դոցենտ, ի.գ.թ. Արսեն Նիկողոսյանը: Քննարկվել է ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածով նախատեսված հարկային մարմինների կողմից քրեական հետապնդման շրջանակը: Մասնակիցները մտքեր են փոխանակել տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններին առնչվող տեսական և գործնական մոտեցումների շուրջ:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })